# ԿԱՐԾԻՔ

***Արմեն Աքիլեսի Մարտիրոսյանի «Սոցիո-մշակութային գործոնի կառավարման հիմնահարցերը կայուն զարգացման նպատակների համատեքստում»*** թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված ***Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում»*** մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ժամանակակից աշխարհում կայուն զարգացման ապահովումը դարձել է պետությունների, միջազգային կազմակերպությունների և գիտական հանրության առաջնային ռազմավարական խնդիրներից մեկը: Չնայած տնտեսական աճի, տեխնոլոգիական առաջընթացի և գլոբալ համագործակցության ընդլայնման միտումներին՝ բազմաթիվ երկրներ շարունակում են բախվել սոցիալական անհավասարությունների, բնապահպանական խնդիրների, կրթական ու ինստիտուցիոնալ մարտահրավերների հետ, որոնք խոչընդոտում են կայուն զարգացման նպատակների լիարժեք իրականացմանը: Այս համատեքստում առավել ակնհայտ է դառնում, որ կայուն զարգացման արդյունքները պայմանավորված են ոչ միայն տնտեսական ռեսուրսներով և պետական քաղաքականությամբ, այլև հասարակության սոցիո-մշակութային առանձնահատկություններով, արժեքային համակարգով, վարքագծային նորմերով և հանրային փոխհարաբերությունների բնույթով:

Սոցիո-մշակութային գործոնները ձևավորում են հասարակության անդամների վերաբերմունքը կրթության, աշխատանքի, նորարարությունների, բնապահպանական պատասխանատվության, հանրային մասնակցության և սոցիալական համախմբվածության նկատմամբ: Դրանք ազդում են ինչպես պետական քաղաքականությունների ընկալման և ընդունման, այնպես էլ իրականացվող բարեփոխումների արդյունավետության վրա: Այդ պատճառով սոցիո-մշակութային միջավայրը դիտարկվում է որպես կայուն զարգացման գործընթացների կարևոր նախադրյալ և կառավարման ազդեցության առարկա:

Հատկապես արդիական է սոցիո-մշակութային գործոնների կառավարման խնդիրը զարգացող և անցումային տնտեսություն ունեցող երկրներում, որտեղ հաճախ առկա են արժեքային համակարգի, հասարակական վարքագծի և ինստիտուցիոնալ փոփոխությունների միջև անհամապատասխանություններ: Նման պայմաններում նույնիսկ զգալի ֆինանսական ներդրումները և բարեփոխումները կարող են չապահովել ակնկալվող արդյունքները, եթե չեն հաշվի առնվում հասարակության մշակութային առանձնահատկություններն ու սոցիալական կապիտալի մակարդակը:

Հայաստանի Հանրապետության համար թեմայի արդիականությունը պայմանավորված է երկրի զարգացման ներկա մարտահրավերներով, մարդկային կապիտալի արդյունավետ օգտագործման,

թվային փոխակերպման, բնապահպանական կայունության և սոցիալական ներառականության ապահովման անհրաժեշտությամբ: Սոցիո-մշակութային գործոնների կառավարման արդյունավետ մեխանիզմների բացահայտումն ու կիրառումը կարող են նպաստել պետական քաղաքականությունների արդյունավետության բարձրացմանը, հանրային մասնակցության ընդլայնմանը և կայուն զարգացման նպատակների առավել հաջող իրականացմանը: Ուստի սոցիո-մշակութային գործոնների կառավարման հիմնահարցերի ուսումնասիրությունը ոչ միայն տեսական, այլև կարևոր գործնական նշանակություն ունի ժամանակակից կառավարման և զարգացման քաղաքականության համար:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ և ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության նպատակն է մշակել տեսական-մեթոդաբանական մոտեցումներ ու գործնականորեն կիրառելի գործիքներ սոցիո-մշակութային գործոնների կառավարման համար ԿԶՆ-ների իրականացման համատեքստում: Նպատակին հասնելու համար առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- համակարգել մշակութային-ինստիտուցիոնալ միջավայրի դերի բացահայտման մոտեցումները և ձևակերպել կառավարելիության միասնական պայման, որը միավորում է էշբիի կիբեռնետիկան, Մոկիրի գիտելիքի աճի տեսությունը, Նորթ–Աճեմօղլու–Աուզանի ինստիտուցիոնալ տնտեսագիտությունը և Հոֆստեդեի ու Շվարցի չափումները,
- մշակել կառավարելիությունը կանխորոշող բաղադրիչների՝ ինստիտուցիոնալ բազմազանության, գիտելիքի բազմազանության, գիտելիքի օգտակար օգտագործման տեղեկատվական գործակցի և կառավարվող բարդության բազմազանության քանակական գնահատման մեթոդաբանությունը,
- իրականացնել մշակութային գործոնների ազդեցության բազմակողմանի վերլուծություն ԿԶՆ-ների բնապահպանական բաղադրիչի վրա՝ Հոֆստեդեի և Շվարցի մոդելների, սոցիալական վստահության ցուցանիշների և Ժուրավլյովի դիսկրետ դասակարգման ալգորիթմի համատեղ կիրառմամբ՝ հնարավոր առավելագույն թվով երկրների ընտրանքի հիման վրա,
- բացահայտել երկրների թվային պատրաստվածության քանակական կախվածությունը մշակութային պրոֆիլից և գնահատել մշակութային չափումների միջնորդավորված դերը «թվայնացում — կայուն զարգացում» փոխկապակցության մեջ:
- իրականացնել Անհրաժեշտ բազմազանության օրենքի անհավասարության պայմանի քանակական ստուգումը՝ որպես սոցիալ-տնտեսական համակարգերի կառավարելիության ախտորոշիչ չափանիշ,

- մշակել մշակութածնության և կրթական աղքատության կառավարման դինամիկ տնտեսամաթեմատիկական մոդելները Հայաստանի Հանրապետության նյութի վրա՝ օպտիմալ կառավարման տեսության ապարատի կիրառմամբ,
- ձևակերպել գործնական առաջարկություններ ՀՀ կայուն զարգացման պետական քաղաքականության համար՝ քանակական թիրախային ուղենիշներով և բյուջետային ծախսերի առաջնահերթությունների որոշմամբ:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:

Ատենախոսության **ներածությունում** հիմնավորվել է թեմայի արդիականությունն ու հրատապությունը, ներկայացվել է հետազոտության առարկան և օբյեկտը, նպատակն ու խնդիրները, գիտական նորույթն ու ստացված արդյունքների կիրառական նշանակությունը:

**Ատենախոսության առաջին՝ «Սոցիո-մշակութային գործոնների կառավարման տեսական հիմքերը կայուն զարգացման համատեքստում»** գլուխը նվիրված է սոցիո-մշակութային գործոնների կառավարման հիմնախնդրի տեսամեթոդաբանական հիմքերի ձևավորմանը՝ համադրելով ինստիտուցիոնալ տնտեսագիտության, գիտելիքի տեսության, կառավարման կիբեռնետիկայի, վարքագծային տնտեսագիտության և մշակութային չափումների ժամանակակից մոտեցումները: Գլխում վերլուծվում են կայուն զարգացման հայեցակարգի էվոլյուցիան և ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակների համակարգը, հիմնավորվում է սոցիո-մշակութային գործոնների նշանակությունը դրանց իրականացման գործում: Դիտարկվում են սոցիալական համախմբվածության, մշակույթի, արժեքների, վստահության և սոցիալական կապիտալի դերը հասարակական ու տնտեսական զարգացման գործընթացներում՝ սկսած Իբն Խալդունի գաղափարներից մինչև ժամանակակից տեսություններ: Առանձնակի ուշադրություն է դարձվում ինստիտուտների և մշակույթի փոխազդեցությանը, մշակութային կոդերի ազդեցությանը զարգացման ուղիների ձևավորման վրա, ինչպես նաև մշակութային տարբերությունների չափման հայտնի մոդելներին՝ Հոֆստեդեի, Շվարցի և Ինգլհարտի մոտեցումների հիման վրա: Աշխատանքի այս հատվածում տեսականորեն հիմնավորվել են սոցիո-մշակութային համակարգի կառավարելիության պայմանները, ինչը հնարավորություն է տալիս սոցիո-մշակութային գործոնները դիտարկել ոչ միայն որպես զարգացման միջավայր, այլև որպես կառավարման և քաղաքական միջամտությունների ինքնուրույն օբյեկտ:

**Ատենախոսության երկրորդ՝ «Սոցիո-մշակութային գործոնների՝ կայուն զարգացման վրա ազդեցության վերլուծություն» գլխում** կառուցվում և փորձարկվում է մշակութային

բարենպաստության ինդեքսը (CCI), որի միջոցով բացահայտվում է մշակութային գործոնների նշանակալի կապը կայուն զարգացման նպատակների իրականացման արդյունքների հետ: Վերլուծվում են մշակութային, ինստիտուցիոնալ և կրթական գործոնների համատեղ ազդեցությունները՝ ցույց տալով, որ մշակութային առանձնահատկությունները հանդես են գալիս որպես զարգացման ինքնուրույն և վիճակագրորեն նշանակալի գործոն: Առանձնակի ուշադրություն է դարձվում կրոնական, լեզվական և արժեքամշակութային տարբերությունների տեղեկատվական բովանդակության գնահատմանը, ինչպես նաև եվրասիական տարածաշրջանի երկրների մշակութային բազմազանության և զարգացման օրինաչափությունների ուսումնասիրությանը: Գլխում իրականացվում է նաև մշակութային գործոնների ազդեցության համալիր գնահատում կայուն զարգացման բնապահպանական բաղադրիչի վրա՝ հիմնավորելով հանրային պատասխանատվության, վստահության և արժեքային համակարգերի կարևոր դերը բնապահպանական արդյունքների ձևավորման գործընթացում: Բացի այդ, ուսումնասիրվում է մշակութային միջավայրի ազդեցությունը երկրների թվային պատրաստվածության և թվային փոխակերպումների արդյունավետության վրա՝ բացահայտելով մշակույթի միջնորդավորված դերը թվայնացման և կայուն զարգացման փոխկապակցվածության մեջ: Գլուխն ավարտվում է Հայաստանի օրինակով սոցիո-մշակութային գործոնների ազդեցության ոլորտային վերլուծությամբ՝ վերարտադրողական առողջության ցուցանիշների համատեքստում, ինչը հաստատում է առաջարկվող մոտեցումների կիրառելիությունը հանրային քաղաքականության տարբեր ուղղություններում:

**Ատենախոսության երրորդ՝ «Սոցիո-մշակութային գործոնների կառավարման մոդելների փորձարարական ապրոբացիա և վերլուծության արդյունքներ»** գլխում մշակվում և փորձարկվում են մշակութաձնության և կրթական աղքատության կրճատման տնտեսամաթեմատիկական մոդելներ, որոնց միջոցով սոցիո-մշակութային գործընթացները ներկայացվում են որպես կառավարելի դինամիկ համակարգեր: Պոնտրյագինի մաքսիմումի սկզբունքի կիրառմամբ կառուցված օպտիմալ կառավարման մոդելը հնարավորություն է տալիս գնահատել կրթական քաղաքականության տարբեր գործիքների արդյունավետությունը և բացահայտել կրթական աղքատության նվազեցման առաջնահերթ ուղղությունները: Առանձնակի ուշադրություն է դարձվում Հայաստանի Հանրապետության օրինակով առաջարկված մեթոդաբանության ապրոբացիային, գնահատվում են երկրի ինստիտուցիոնալ, գիտելիքային և մշակութային ներուժի փոխազդեցությունները, ինչպես նաև բացահայտվում են զարգացման հիմնական սահմանափակումներն ու հնարավորությունները: Ներկայացվում են Հայաստանի կայուն զարգացման քաղաքականության կատարելագործմանն ուղղված գործնական

առաջարկություններ, որոնք վերաբերում են կրթության, ինստիտուցիոնալ բարեփոխումների և սոցիո-մշակութային գործոնների համաձայնեցված կառավարման մեխանիզմների ներդրմանը:

Ատենախոսության ***եզրակացություններ*** բաժնում ներկայացվել են հետազոտության շրջանակներում դրված խնդիրներին ու նպատակներին համապատասխան կատարված հիմնական եզրահանգումները:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսության շրջանակներում իրականացված հետազոտությամբ ստացված գիտական արդյունքներից որպես նորույթ են ներկայացվել հետևյալները.

1. Սոցիո-մշակութային գործոնները որակապես նկարագրվող արտաքին համատեքստից կերպափոխվել են պետական տնտեսական քաղաքականության կառավարելի օբյեկտ: Մշակվել է կառավարման գործիքակազմ, որը ներառում է՝ կառավարելիության պայմանը, դրա բաղադրիչների քանակական գնահատման մեթոդաբանությունը, մշակութային բարենպաստության ինդեքսը և օպտիմալ կառավարման դինամիկ մոդելները: Վերջիններս թույլ են տալիս տարբերակել ԿՀՆ-ների իրականացման սահմանափակիչ և ռեսուրս հանդիսացող մշակութային-ինստիտուցիոնալ բնութագրերը, դրանց հիման վրա որոշելով կառավարման ներգործությունների ու բյուջետային ծախսերի առաջնահերթությունները:
2. Մշակվել է սոցիալ-տնտեսական համակարգերի կառավարելիության բացահայտման միասնական մոտեցում ԿՀՆ-ների իրականացման գործընթացում, որը մեկ ֆորմալ կառուցվածքում միահյուսում է ինստիտուցիոնալ տնտեսագիտության, գիտելիքի աճի տեսության, կիբեռնետիկայի և մշակութային չափումների նախկինում ինքնուրույն հանդես եկող ավանդույթները և հասցված է գործնական չափման մակարդակի՝ դրա բաղադրիչների կտրվածքով ամբողջական քանակական գնահատման մեթոդաբանության շնորհիվ՝ միջազգային բաց տվյալների բազաների նյութի վրա:
3. Իրականացվել է մշակութային գործոնների ազդեցության բազմակողմանի փորձագիտական վերլուծություն ԿՀՆ-ների բնապահպանական բաղադրիչի համար՝ 55 երկրի և 25 փոփոխականի հիման վրա՝ ըստ Հոֆստեդեի, Շվարցի մոդելների և վստահության ցուցանիշների:
4. Բացահայտվել և գնահատվել են երկրների թվայնացման պատրաստվածության մշակութային որոշիչները. ցույց է տրվել, որ անհատապաշտությունը, իշխանության ցածր հեռադրությունը և անորոշության նկատմամբ հանդուրժողականությունը վիճակագրորեն

նշանակալի կանխատեսում են ցանցային պատրաստվածության ինդեքսը, իսկ մշակութային պրոֆիլը հանդես է գալիս որպես թվային ներդրումների արդյունավետության ցուցիչ՝ ԿՀՆ9, ԿՀՆ17 հասանելիության գործընթացում:

5. Մշակվել են մշակութածնության և կրթական աղքատության օպտիմալ կառավարման մոդելները՝ փորձագիտորեն ստուգված դիտարկվող երկրների այդ թվում Հայաստանի Հանրապետության տվյալների հիման վրա: Կրթական աղքատության մոդելը չափաբերվել է ավելի վաղ փաստացի արժեքի վրա և հաստատվել հետագա փաստացի տվյալներով:

## ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՆ ՈՒ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Արմեն Մարտիրոսյանի «Սոցիո-մշակութային գործոնի կառավարման հիմնահարցերը կայուն զարգացման նպատակների համատեքստում» թեմայով ատենախոսությունը կարելի է գնահատել որպես տնտեսագիտության ոլորտում հրատապ լուծումներ պահանջող մի շարք խնդիրների առաջադրման և դրանց լուծման գործնական ուղիների մշակման ուղղությամբ իրականացված ինքնուրույն և ամբողջական հետազոտություն: Ստացված գիտական արդյունքները բնութագրվում են ինչպես տեսական, այնպես էլ գործնական կարևոր նշանակությամբ:

Այս ամենի հետ մեկտեղ աշխատանքում մեր կողմից առանձնացվել են մի քանի առաջարկություններ ու վիճահարույց հարցադրումներ, որոնք գրախոսվող աշխատանքի թեմայով ուսումնասիրությունների շարունակման դեպքում, մեր կարծիքով, պետք է արժանանան հեղինակի ուշադրությանը: Ստորև ներկայացվում են դրանցից հիմնականները:

## ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Աշխատանքում հեղինակն անդրադառնում է մշակույթ-ինստիտուտներ-կայուն զարգացում շղթային և առավելապես կենտրոնանում է այն հարցի վրա, թե ինչպես են սոցիո-մշակութային գործոններն ազդում ինստիտուտների զարգացման և դրա միջոցով էլ կայուն զարգացման վրա: Կարծում ենք՝ հավելյալ հիմնավորման անհրաժեշտություն կա, թե ինչու է առաջնայնությունը տրվել մշակույթի ազդեցությանը ինստիտուտների վրա և ոչ թե հակառակը: Չէ՞ որ ինստիտուտներն էլ իրենց հերթին են ազդում սոցիո-մշակութային գործոնների վրա: Ի վերջո սոցիո-մշակութային գործոնի կառավարումը հենց ինստիտուտների միջոցով է իրականացվում:

2. Թեև աշխատանքի վերնագրում նշվում է կայուն զարգացման նպատակները, սակայն աշխատանքում հեղինակն առավելապես շեշտադրում է կատարել կայուն զարգացման վրա, իսկ կայուն զարգացման նպատակներին անդրադարձը հատվածական է: Աշխատանքը կշահեր, եթե հեղինակը առավել մեծ ուշադրություն դարձներ կայուն զարգացման նպատակներին և դրանցից յուրաքանչյուրի իրագործման հարցում սոցիո-մշակութային գործոնների դերին:
3. Աշխատության 2.1 ենթագլխում մշակութային գործոնների ազդեցությունը գնահատվում է SDG համակցված ինդեքսի միջոցով, ինչը հնարավորություն է տալիս բացահայտել ընդհանուր օրինաչափություններ: Միաժամանակ, նպատակահարմար կլիներ վերլուծությունը լրացնել նաև ԿԶՆ-ների առանձին նպատակների կամ դրանց խոշորացված խմբերի մակարդակով՝ առավել հստակ ներկայացնելու մշակութային գործոնների ազդեցության ուղղություններն ու մեխանիզմները:
4. Աշխատանքի 3.1 ենթագլխում ատենախոսը ներկայացնում է մշակութագենեզի կառավարման մի մոդել, որով ցույց է տալիս գործոնների միջև պատճառական կապերը և առաջ քաշում դրանց կառավարման որոշակի մոտեցումներ (սխեմա 3.2, էջ 113): Մինչդեռ գաղտնիք չէ, որ բազմաթիվ տեսաբաններ իրենց հետազոտություններում հանգել են եզրակացության, որ մշակութային արժեքներն ու վարքագծային նորմերը սովորաբար բնութագրվում են բարձր իներտությամբ և համեմատաբար երկար ժամանակահատված է պահանջվում դրանց ձևավորման կամ վերափոխման համար: Ուստի աշխատանքն էապես կշահեր, եթե հեղինակը ներկայացներ փաստարկներ՝ հիմնավորելու մշակութային փոփոխությունների կառավարելիության վերաբերյալ իր գաղափարները, ինչպես նաև նշելու, թե բաղադրիչներից յուրաքանչյուրը ինչ ժամանակային հորիզոնում է հնարավոր վերափոխել:
5. Աշխատանքում տեղ են գտել որոշակի բացթողումներ և վրիպակներ, մասնավորապես՝ սեղմագրի 8-րդ էջում նշված է, որ ատենախոսության թեմայով հրապարակվել է 11 գիտական հոդված, մինչդեռ նույն սեղմագրի 24-25 էջերում թվարկված է 9 գիտական հոդված: Աշխատանքի 3.2 ենթագլուխն ավարտվում է 3.3 ենթագլխի եզրահանգումներով: Օգտագործված գրականության ցանկում պահպանված չեն աղբյուրների ըստ լեզուների տարանջատումն ու այբբենական հերթականությունը:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արված դիտողությունները, մեր կարծիքով, չեն ստվերում հետազոտության արդյունքները: Դրանք ատենախոսի հետագա ուսումնասիրությունների որակի բարելավման նպատակ են հետապնդում:

Արմեն Աքիլեսի Մարտիրոսյանի թեկնածուական ատենախոսությունն ինքնուրույն հետազոտություն է, որտեղ դրված և փորձ է արված լուծել տեսական և գործնական արժեքավոր և արդիական խնդիրներ:

Ատենախոսը հանդես է բերել մասնագիտական և վերլուծական խորը գիտելիքներ, ստացված արդյունքները տեսական, մեթոդական և գործնական կարևոր նշանակություն ունեն:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակված են հեղինակի կողմից հրատարարկված 9 գիտական հոդվածներում: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և ներառում է աշխատանքի հիմնական դրույթներն ու արդյունքները:

Բոլոր էական առումներով Արմեն Աքիլեսի Մարտիրոսյանի «Սոցիո-մշակութային գործոնի կառավարման հիմնահարցերը կայուն զարգացման նպատակների համատեքստում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

**Պաշտոնական ընդդիմախոս,**
**ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման**
**ֆակուլտետի դեկան,**
**տնտեսագիտության թեկնածու, դոցենտ՝** **Կ. Գ. Խաչատրյան**

**Պարոն Կ. Գ. Խաչատրյանի**
**ստորագրությունը հաստատում եմ՝**
**ԵՊՀ գիտական քարտուղար,**
**բանասիրական գիտությունների թեկնածու՝** **Մ. Վ. Հովհաննիսյան**

***26 հունիսի 2026թ.***